

ԱՐՍԵՆ ՍԱՐԴԱՐՅԱՆ  
ARSEN SARDARYAN

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ  
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Ո՞՞ ԵՎ ՀՀ  
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ  
(համեմատական-իրավական վերլուծություն)

Համաձայն ցանկացած իրավական պետության օրենսդրության՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների մի սուբյեկտի կողմից՝ իր հակաօրինական գործողությունների (անգործության) հետևանքով, քաղաքացիաիրավական հարաբերությունների այլ սուբյեկտի կյանքին, առողջությանը կամ գույքին պատճառված վնասը ենթակա է փոխհատուցման: Առանձին դեպքերում, պատճառված վնասը ենթակա է փոխհատուցման անկախ վնաս պատճառողի մեղքից: Քաղաքացիաիրավակ վնասի փոխհատուցման պարտականությունը կարող է ապահովագրվել կամավոր կամ պարտադիր կարգով: Նշված պատասխանատվության ապահովագրության հիմունքները ՀՀ-ում և ՌԴ-ում կարգավորվում են Քաղաքացիական օրենսգրքով (այսուհետ ՔՕ):

Համաձայն ՌԴ Քաղաքացիական օրենսգրքի նորմերի քաղաքացիական պատասխանատվության ապահովագրությունը լինում է երկու տեսակի՝ վնաս պատճառելուց և պայմանագրից բխող պատասխանատվության ապահովագրություն: Դիտարկենք յուրաքանչյուրի իրավական առանձնահատկությունները:

ՌԴ Քաղաքացիական օրենսգրքի 931-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապահովագրության պայմանագրով անձի կյանքին, առողջությանը կամ գույքին վնաս պատճառելու պատասխանատվության ռիսկը կարող է ապահովագրվել ապահովագրվողի, ինչպես նաև այլ անձի պատասխանատվության ռիսկը, ում վրա կարող է դրվել նման պատասխանատվություն:

Նմանատիպ կարգավորում է սահմանված ՀՀ քաղ. օրենսգրքի 1021<sup>1</sup> հոդվածով, որը սակայն վերնագրված է երրորդ անձին պատճառված վնասի

ապահովագրության<sup>1</sup>: Օրենքի նման սահմանումից բխում է հետևյալը.

1. Ապահովագրության օբյեկտ է հանդիսանում այլ անձանց վնաս պատճառելու հետևանքով պատասխանատվության առաջացման գույքային շահը: Տվյալ դեպքում ապահովագրության օբյեկտի պահպանման գույքային կորուստներ<sup>2</sup> են համարվում երրորդ անձանց գույքին կամ ոչ նյութական արժեքներին՝ կյանքին, առողջությանը պատճառված վնասի փոխհատուցման արդյունքում<sup>3</sup> կրած ծախսերը:

2. Վնաս պատճառելուց բխող պատասխանատվության ապահովագրության պարտականությունը, ի տարբերություն պայմանագրից, ծագում է ոչ թե համաձայնությունից, այլ երրորդ անձանց կյանքին, առողջությանը կամ գույքին վնաս պատճառելու փաստի ուժով: Այդպիսի պարտավորությունները կոչվում են դելիկտային պարտավորություններ: Որպեսզի պարտավորությունը ծագի վնաս պատճառելուց անհրաժեշտ է որոշակի հանգամանքների համակցություն, որը կոչվում է դելիկտային պարտավորության բովանդակություն: Այն է՝ տվյալ օբյեկտի առկայությունը, որին վնաս է պատճառվել, վնաս պատճառողի առկանությունը, նրա մեղքի առկայությունը և վնաս պատճառողի և ծագած վնասի միջև պատճառահետևանքային կապը: Մակայն գոյություն ունեն բացառություններ, այսպես, համաձայն ՌԴ ՔՕ 1064-րդ հոդվածի 2-րդ մասի, ինչպես նաև ՀՀ ՔՕ 1058-րդ հոդվածի 2-րդ մասի հնարավոր է վնասի փոխհատուցում վնաս պատճառողի մեղքի բացակայության, իսկ որոշ դեպքերում

<sup>1</sup> ՀՀ ՔՕ 1021<sup>1</sup> -րդ հոդվածը, տառացի վեոնագրած է. «Երրորդ անձի կողմից վնաս պատճառելու համար պատասխանատվության ապահովագրությունը»: Ակնհայտ է, որ վեոնագիրը սխալ է գրված. «Երրորդ անձի կողմից» արտահայտության փոխարեն պետք է գրվեր «Երրորդ անձին» արտահայտությունը: Նշենք, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում 2007 թվականի մայիսին կատարված փոփոխություններով՝ օրենսդիրը անհիմն հեղափոխություն կատարեց ՀՀ ՔՕ Ապահովագրություն գլխում և ուժը կորցրած ճանաչեց 985-րդ հոդվածից սկսած մինչև 993-րդ հոդվածը ներառյալ: Այդ հոդվածների շարքում էր վնաս պատճառելու համար պատասխանատվության ապահովագրությունը, որը նույնարվանդակ էր ՌԴ ՔՕ 931-րդ հոդվածին: Ավելի մանրամասն տես. Диссертация А.Г.Сардаряна "Правовые проблемы института обязательного страхования гражданской ответственности владельцев автотранспортных средств в РФ и РА (сравнительно-правовой анализ)".

<sup>2</sup> Ю.Б. Фогельсон, в частности, отмечает: «Понятие убытков в страховании или «страховых убытков» должно пониматься как денежная оценка имущественного вреда» (Фогельсон Ю.Б. Договор страхования в российском гражданском праве. С. 84 - 85).

<sup>3</sup> М.И. Брагинский по данному вопросу пишет, что объектом является «несомненно, имущественный интерес к тому, чтобы не понизить соответствующую сумму потерпевшему» (Брагинский М.И. Указ. соч. С. 59).

վնաս պատճառողը կարող է ազատվել պատասխանատվությունից նույնիսկ մեղքի առկայության պարագայում, օրինակ անհրաժեշտ պաշտպանության և ծայրահեղ անհրաժեշտության վիճակում պատճառված վնասի դեպքում (ՌԴ ՔՕ 1066-րդ և 1067-րդ և համանման ՀՀ ՔՕ 1060-րդ և 1061-րդ հոդ. հոդ.):

Այսպիսով, առկա է վնաս պատճառելուց բխող պատասխանատվության ապահովագրության երկու տիպի իրավահարաբերություն. առաջին՝ դելիկտից բխող, երկրորդ՝ ապահովագրական իրավահարաբերությունները:

3. Ապահովագրական դեպքը դա վնաս պատճառելու հետևանքով անմիջապես ծագող քաղաքացիական պատասխանատվությունն է, այսինքն դելիկտային պարտավորության բոլոր տարերի առկայությունը: Փաստորեն տուժողը (դելիկտային պարտավորությունների պարտատերը) վնասի փոխհատուցման հայտ է ներկայացնում վնաս պատճառողին: ՌԴ ՔՕ 1064-րդ, ինչպես նաև ՀՀ քաղ. Օր-ի նույնաբովանդակ 1058-րդ հոդվածներից բխում է, որ վնասի փոխհատուցման պարտականությունը օբյեկտիվ բնույթ է կրում, սակայն վնաս պատճառողը գույքային կորուստներ կրում է միայն վնասի փոխհատուցման հայտ ներկայացնելու դեպքում, քանի որ դա տուժողի տուլյեկտիվ իրավունքն է:

Վ. Յու. Աբրամովը և Ս. Վ. Դեդիկովը կարծում են, որ քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության պայմանագրով ապահովադիրը ապահովագրական հատուցում ստանալու իրավունք ձեռք չի բերում միայն այն փաստի ուժով, որ իր կողմից վնաս է պատճառվել, անհրաժեշտ է, որ ինքը փոխհատուցած լինի այդ վնասները<sup>4</sup>:

Ինչպես նշվեց քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության պայմանագրով ապահովագրության առարկա է հանդիսանում գույքային կորուստները, որոնք իրենց բնույթով նման են ՌԴ ՔՕ 15-րդ հոդվածով, ինչպես նաև ՀՀ ՔՕ նույնաբովանդակ 17-րդ հոդվածով նախատեսված իրական վնասին: Հետևաբար այն ծախսերը, որը ապահովադիրը ստիպված կլինի կրելու պատճառված վնասի փոխհատուցման համար (այլ ոչ միայն արդեն կրածները) ապահովադրին ապահովագրական հատուցման իրավունք է տալիս:

Այսպիսով, ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցման վճարման պարտականության ծագման բավարար հիմքերն են՝ ապահովադրի դելիկտային պարտականության ծագման և տուժած անձի կողմից համապատասխան հատուցման պահանջի ներկայացման փաստերը:

<sup>4</sup> Судебно-практический комментарий к страховому законодательству / В.Ю. Абрамов, С.В. Дедиков. С.39.

4. Համաձայն վնասի փոխհատուցման ապահովագրության պայմանագրի շահառու կարող է լինել միայն տուժողը, քանի որ այդ պայմանագիրը կնքվում է հոգուտ այն անձանց, ում կարող է վնաս պատճառվել, նույնիսկ եթե պայմանագիրը կնքված է հոգուտ ապահովալորի կամ ապահովագրված անձի կամ պայմանագրում նշված չէ, թե ում օգտին է այն կնքված (ՌԴ ՔՕ 931-րդ հոդված 3-րդ մաս):

5. Այն անձն, որի կողմից պատճառված վնասի համար պատասխանատվության ռիսկն ապահովագրվել է, պետք է նշվի ապահովագրության պայմանագրում: Եթե այդ անձը պայմանագրում նշված չէ, ապա ապահովագրված է համարվում ապահովալորի պատասխանատվության ռիսկը (ՌԴ ՔՕ 931-րդ հոդված 2-րդ մաս, ՀՀ ՔՕ 1021<sup>1</sup>-րդ հոդված 2-րդ մաս):

6. Ռուս իրավագետների մեջ վեճ է առաջացնում ՌԴ օրենսգրքի 931-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի հարաբերակցությունը: Նշենք, որ ՌԴ ՔՕ 931-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը լիովին համընկնում են ՀՀ ՔՕ 1021<sup>1</sup>-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերին համապատասխանաբար: Մոդիլը նրանում է, որ ՌԴ ՔՕ 931-րդ հոդվածի 4-րդ կետը տուժողին անմիջապես իրավունք է տալիս պահանջելու վնասի փոխհատուցում, եթե վնաս պատճառելուց բխող պատասխանատվության ապահովագրությունը պարտադիր է (առաջին դեպքը), նախատեսված է օրենքով (երկրորդ դեպքը) կամ ապահովագրության պայմանագրով (երրորդ դեպքը): Գիտնականների մի մասը (օրինակ Ի. Օ. Ակսենովը, Ա. Վ. Ռախմիրովիչը)<sup>5</sup> գտնում են, որ տուժողը ապահովագրողին վնասը փոխհատուցելու պահանջ կարող է ներկայացնել միայն Օրենսգրքի 931-րդ հոդվածի 4-րդ կետում նշված դեպքերում: Ի տարբերություն այս տեսակետի Յու. Բ. Ֆոզելսոնը գտնում է, որ շահառուն ապահովագրողին կարող է դիմել ցանկացած ժամանակ: Այս տեսակետը Ֆոզելսոնը հիմնավորում է ՌԴ ՔՕ 430-րդ հոդվածի դրույթներով, որով կարգավորվում է երրորդ անձի օգտին կնքված պայմանագրով ծագող իրավահարաբերությունները: Նշենք որ Ֆոզելսոնի տեսակետը ակտուալ է նաև Հայաստանի Հանրապետության համար, որի ՔՕ-ի 446-րդ հոդվածը նույնաբովանդակ է ՌԴ քաղ.օր-ի 430-րդ հոդվածին: Եթե առաջին տեսակետի կողմնակիցները գտնում են, որ ՌԴ ՔՕ 931-րդ հոդվածի 4-րդ կետը նախատեսում է տուժողի կողմից ապահովագրական հատուցում պահանջելու մի քանի դեպք, ապա Ֆոզելսոնը հնարավոր է համարում նշված

<sup>5</sup> Аксенова О.А. Страхование ответственности за причинение вреда // Приложение к газете «Финансовая Россия». 1998. №3. С.7.

դեպքերում շահառուի կողմից պահանջել ոչ միայն ապահովագրական հատուցում, այլ նաև վնասի փոխհատուցում<sup>6</sup>:

Համաձայն Ա. Ի. Խոլոյակովի տեսակետի ՌԴ ՔՕ 931-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն շահառուն վնասի փոխհատուցումը ստանալու համար իրավունք ունի դիմել ապահովագրողին, այլ ոչ թե վնաս պատճառող անձին, որը օրենսդրի սխալն է<sup>7</sup>: Միևնույն ժամանակ նա նշում է, ՔՕ 931-րդ հոդվածի 4-րդ մասը համեմատած նույն հոդվածի 3-րդ մասի, ապահովագրական հատուցման սահմանափակում է պարունակում:

Այլ դիրքորոշման կողմնակից է Մ. Ի. Բրագինսկին, վերլուծելով ՌԴ ՔՕ 931-րդ հոդվածի նորմերը, գալիս է եզրահանգման, որ «թեև ոչ միշտ է, որ հստակ արտահայտված է, սակայն գոյություն ունի եականորեն միմյանցից տարբերվող պայմանագրերի երկու ենթատեսակ»<sup>8</sup>: Մ. Ի. Բրագինսկին առաջարկում է առանձնացնել ապահովագրության պայմանագիր - վնասի ռիսկի պատասխանատվության համար (ՌԴ ՔՕ 931-րդ հոդված 1-ին կետ) և վնասի պատճառման պատասխանատվության ապահովագրության պայմանագիր (ՌԴ ՔՕ 931-րդ հոդված 4-րդ կետ)<sup>9</sup>: Առաջին պայմանագրով շահառուն և տուժողը տարբեր անձիք են, և ըստ գիտնականի կարծիքի, շահառուն վնասի փոխհատուցման պահանջ ներկայացնելու իրավունք չունի: Երկրորդ դեպքում շահառուն հենց տուժողն է, որը ՌԴ ՔՕ 59-րդ գլխի(վնաս պատճառելուց բխող պատասխանատվություն) համաձայն պետք է ապացուցի, որ ապահովադիրը վնասը պատճառելու համար պատասխանատվություն է կրում: Այս դեպքում շահառուն ունի այլընտրանքային իրավունք՝ կարող է պահանջել, որ, կամ վնասը փոխհատուցեն (որպես տուժող) կամ ապահովագրական հատուցում վճարեն (որպես շահառու ապահովագրության պայմանագրով):

Մեր կարծիքով այս խնդրի շուրջ նախընտրելի է Յու. Բ. Ֆոգելսոնի դիրքորոշումը: ՌԴ ՔՕ 931-րդ հոդվածի 4-րդ կետի բառացի մեկնաբանումից պարզ է, որ օրենսդիրը այս կետում շահառուի իրավական և նյութական պաշտպանությունից ելնելով է օգտագործել «վնասի փոխհատուցումը պահանջել ապահովագրական գումարի շրջանակներում»: Մ. Ի. Բրագինսկիի դիրքոր-

<sup>6</sup> Фогельсон Ю.Б. Комментарий к страховому законодательству. С. 103.

<sup>7</sup> Худяков А.И. Указ. соч. С.435.

<sup>8</sup> Брагинский М.И. Договор страхования. С.113.

<sup>9</sup> Различие между данными договорными моделями М.И. Брагинский видит так же в страховом случае. Если для первой модели страховым случаем является наступление ответственности страхователя (или третьего лица), то страховым случаем для второй модели является непосредственное причинение вреда (см.: Брагинский М.И. Указ. соч. С.114).

րոշումը ՌԴ ՔՕ 931-րդ հոդվածում ամրագրված պատասխանատվության ապահովագրության երկու պայմանագրերի առկայության վերաբերյալ չի հսկասում և նույն հոդվածի 3-րդ մասին, համաձայն որի պատճառված վնասի համար պատասխանատվության ռիսկի ապահովագրության պայմանագիրը համարվում է կնքված՝ հոգուտ այն անձանց, որոնց կարող է վնաս պատճառվել (շահառուներ): Հոդվածի այս մասով օրենսդիրը բացառել է Բրազիլիայի տեսակետը՝ ՌԴ ՔՕ 931-րդ հոդվածում առանձնացնելու պայմանագրի երկու տեսակ:

7. Որոշ գիտնականներ՝ օրինակ՝ Ս. Ս. Մաքստոբեովը և Ա. Բ. Խուդյակովը, վնաս պատճառելուց բխող պատասխանատվության ապահովագրության պայմանագրի առանձնահատկությունն են դիտարկում սուբրոգացիայի անթույլատրելիությունը<sup>10</sup>:

8. Այս պայմանագրի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ վնասի ամբողջական փոխհատուցման սկզբունքի համաձայն (ՌԴ ՔՕ 1064-րդ հոդ. 1-ին մաս 1-ին կետ և ՌԴ ՔՕ 1072-րդ հոդ., ՀՀ ՔՕ 1058-րդ հոդ. 1-ին մաս և ՀՀ ՔՕ 1066-րդ հոդ.) ապահովադիրը, որպես վնաս պատճառած անձ, իր և տուժողի միջև ծագած արտապայմանագրային պարտավորությունների ուժով պարտավոր է հատուցել ապահովագրական գումարի և փաստացի հասցված վնասի տարբերությունները (եթե ապահովագրական գումարը բավարար չէ ամբողջ վնասի հատուցման համար)<sup>11</sup>:

Պայմանագրային պարտավորություններից բխող ռիսկի ապահովագրությունը էականորեն տարբերվում է վնաս պատճառելուց բխող պատասխանատվությունից: Նախ և առաջ պետք է նշել, որ պայմանագրային պարտավորություններից բխող ռիսկի ապահովագրությունը ՌԴ ՔՕ 932-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն թույլատրվում է միայն այն դեպքում, երբ դա նախատեսված է օրենքով<sup>12</sup>: Հատկանշական է, որ ՀՀ ՔՕ-ը 2007թ փոփոխություններից հետո (ուժը կորցրած ճանաչվեց 988-րդ հոդվածը) ընդհանրապես չի նախատեսում պայմանագրային պարտավորություններից բխող ռիսկի

<sup>10</sup> Մանրամասն տես. Ա.Հ. Սարդարյանի գիտական հոդված. «Ռեգրեսի կիրառման իրավական հիմքերը և առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության ԱՊՊԱ օրենքի համաձայն» (համեմատական - իրավական վերլուծություն): «Օրինականություն» պարբերական: Երևան 2012թ. Ապրիլ:

<sup>11</sup> На это обращают внимание Брагинский М.И. Указ. соч. С.115, Мартьянова Т.С. Гражданское право: в 2 т. Том II. Полумом 2: учебник / отв. ред. проф.Е.А. Суханов. С 191).

По мнению С.А. Герасименко, жесткое ограничение случаев страхования договорной ответственности должно способствовать «воспитанию» страхователя.

ապահովագրություն, ինչը մեր կարծիքով, ազատ շուկայական հարաբերությունների զարգացման պայմաններում լուրջ թելություն է:

Հստակապես ՌԴ ՔՕ 932-րդ հոդվածի ապահովագրական դեպքը պայմանագրի խախտումն է: Քանի որ ՌԴ ՔՕ-ն այդ հասկացությունը չի բացահայտում, անհրաժեշտ է նշել, թե ինչ է հասկացվում պայմանագրի խախտման տակ:

Պայմանագրի խախտումը դա կողմերի իրավունքների և պարտականությունների խախտումն է: Այս համատեքստում պայմանագրի խախտումը դա պարտապահի կողմից պայմանագրային պարտավորությունների չկատարելն է կամ ոչ պատշաճ կատարելը, որի արդյունքում պարտատիրոջը վնաս է պատճառվել (ՌԴ ՔՕ 393-րդ հոդված): Պայմանագրային պարտավորություններից բխող ռիսկի ապահովագրությունը պայմանագրով, որպես ապահովագրական դեպք, կարող է լինել միայն պայմանագրից բխող պարտավորությունների չկատարելը կամ ոչ պատշաճ կերպով կատարելը, որոնք հանգեցրել են պարտատիրոջ համար կորուստների: Հակառակ մեկնաբանությունը այս ապահովագրության պայմանագրով շահառուի համար անհիմն հարստացման ենթաավորություն կստեղծի:

Չնայած քաղաքացիական պատասխանատվության պայմանագրերի միջև եղած տարբերությունների կան նաև ընդհանուր հատկանիշներ: Օրինակ, ըստ ՌԴ ՔՕ 932-րդ հոդվածի 3-րդ կետի պայմանագրային պարտավորություններից բխող ռիսկի ապահովագրության պայմանագիրը, ինչպես և վնաս պատճառելուց բխող պատասխանատվության ապահովագրության պայմանագիրը, կնքվում է հոգուտ երրորդ անձանց, քանի որ շահառուն այն կողմն է, ում նկատմամբ ըստ պայմանագրի պայմանների ապահովադիրը կրում է պատասխանատվություն, եթե նույնիսկ ապահովագրության պայմանագիրը կնքված է հոգուտ մեկ այլ անձի: Այս պայմանագրերի ընդհանուր հատկանիշն է նաև սուբբոգացիայի անթույլատրելիությունը:

**Subject of a scientific article: Features of the legal regulation of liability insurance in the Russian Federation and the Republic of Armenia (relatively legal analysis).**

In this paper, a detailed comparative legal analysis of the legislative regulation of liability insurance in the Russian Federation and the Republic of Armenia. Subspecies are considered in detail the civil LIABILITY insurance, in the above privacy of their differences and relationships. Identified deficiencies of legislation in this area and made proposals to address them.